ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2015

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 4

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Նկարում ո՞ր տառով է պատկերված հյուսիսային բևեռային շրջագիծը.**

1) Գ
2) Է
3) Ա
4) Բ



2 **Եթե քարտեզի թվային մասշտաբը 1 : 250 000 000 է, ապա դրա անվանական մասշտաբը կլինի.**

1) 1 սմ–ում՝ 25 կմ
2) 1 սմ–ում՝ 2,5 կմ
3) 1 սմ–ում՝ 250 կմ
4) 1 սմ–ում՝ 2500 կմ

3 **Երկու կետերի հեռավորությունը 1 : 3 000 000 մասշտաբի քարտեզում 12 սմ է: Կետերի միջև իրական հեռավորությունը կլինի.**

1) 400 կմ
2) 460 կմ
3) 300 կմ
4) 360 կմ

4 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Ամենաերկար միջօրեականը գլխավոր կամ զրոյական միջօրեականն է:
2) Հավասարանկյուն պրոյեկցիայում աղավաղվում են միայն անկյունները, իսկ օբյեկտների մակերեսները և գծերի երկարությունները չեն աղավաղվում:
3) Երկրի գնդաձևության շնորհիվ նույն պահին նրա մակերևույթի տարբեր աշխարհագրական լայնություններում Արեգակի ճառագայթներն ընկնում են տարբեր անկյան տակ:
4) Երկրագունդը էլիպսաձև է և հասարակածից ավելի շատ է սեղմված, քան բևեռներից:

5 **Մեկ խորանարդ մետր օդում պարունակվող ջրային գոլորշիների քանակը՝ արտահայտված գրամներով, կոչվում է.**

1) բացարձակ խոնավություն
2) չհագեցած օդ
3) հագեցած օդ
4) հարաբերական խոնավություն

6 **Բնութագրումով որոշել օդային զանգվածի տիպը.**

Այդ օդային զանգվածները ձևավորվում են մթնոլորտային բարձր ճնշման գոտիներում՝ ձյան և սառույցների վրա: Այդ պատճառով դրանք մշտապես սառն են, չոր ու թափանցիկ: Ո՞ր օդային զանգվածներն են.

1) արևադարձային
2) հասարակածային
3) արկտիկական (անտարկտիկական)
4) բարեխառն

7 **Արեգակից ստացվող ջերմության քանակը կախված է.**

1) օվկիանոսներից և ծովերից տվյալ վայրի ունեցած հեռավորությունից
2) տվյալ վայրի բուսապատվածության աստիճանից
3) գերիշխող քամիներից
4) լեռնալանջերի դիրքադրությունից

8 **Օդի բացարձակ խոնավությունը 12 գ/մ³ է: Տվյալ ջերմաստիճանում օդը հագեցնելու համար անհրաժեշտ է 40 գ/մ³ ջրային գոլորշի: Հարաբերական խոնավությունը կլինի.**

1) 50 %
2) 70 %
3) 20 %
4) 30 %

9 **Ո՞ր մայրցամաքի ռելիեֆի կտրվածքն է պատկերված արևմուտքից արևելք ուղղությամբ.**



1) Անտարկտիդա
2) Հարավային Ամերիկա
3) Աֆրիկա
4) Ավստրալիա

10 **Կլիմագրամի միջոցով որոշել, թե որ սեզոնին են թափվում ամենաշատ տեղումները հարավային կիսագնդի Բ բնակավայրում.**

1) աշնանը
2) ձմռանը
3) գարնանը
4) ամռանը



11 **«Գետ — ծոց» զույգերից ընտրել ճիշտը.**

1) Ինդոս — Օմանի
2) Կուպերս կրիկ — Մեծ Ավստրալական
3) Կոլորադո — Մեքսիկական
4) Լուար — Բիսկայան

12 **Ո՞ր բնական զոնային բնորոշ բուսատեսակներ են կաղնին, հաճարենին, հացենին, թխկին.**

1) հասարակածային խոնավ մշտադալար անտառների
2) բարեխառն գոտու լայնատերև անտառների
3) մերձարևադարձային մշտադալար անտառների և թփուտների
4) սավաննաների և նոսր անտառների

13 **Բնութագրումով որոշել գետը.**

Գետը Եվրասիայի արևելյան մասում է և թափվում է Դեղին ծով: Հորդանում է ամռանը՝ կապված մուսսոնային անձրևների հետ: Ո՞ր գետն է.

1) Մեկոնգ
2) Ամուր
3) Հուանհե
4) Յանցզի

14 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Մթնոլորտային բարձր ճնշման գոտիներում առատ տեղումներ են թափվում:
2) Արեգակից ստացվող ջերմությունը Երկրի վրա բաշխված է հավասարաչափ:
3) Արևադարձային լայնություններում հաստատվում է ցածր ճնշում:
4) Որքան փոքր է Արեգակի ճառագայթների անկման անկյունը, այնքան Երկրի մակերևույթը քիչ ջերմություն է ստանում:

15 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Մարտի 21–ին Արեգակի ճառագայթներն ուղղահայաց են ընկնում հարավային արևադարձի վրա:
2) Յուրաքանչյուր ժամային գոտուց արևելք ընկած գոտու ժամանակը 1 ժամով առաջ է նախորդից:
3) Արեգակի ճառագայթները նույն լայնության վրա տարվա ընթացքում միշտ նույն անկյան տակ են ընկնում:
4) Երկիրն Արեգակի շուրջը պտտվում է շրջանաձև ուղեծրով:

16 **«Գետ — աշխարհամաս» զույգերից ընտրել ճիշտը.**

1) Ամուր — Ամերիկա
2) Անգարա — Ասիա
3) Թեմզա — Ավստրալիա և Օվկիանիա
4) Արաքս — Եվրոպա

17 **Ո՞ր ծովերի մակերևութային ջրերն են սառը.**

1) Կորալյան և Կարմիր
2) Կարիբյան և Սարգասյան
3) Արևելաչինական և Արաբական
4) Բաֆինի և Ռոսսի

18 **«Հարթավայր — դրա տարածքով հոսող գետ» զույգերից ընտրել ճիշտը.**

1) Լավրենտյան սարահարթ — Կոլորադո
2) Կենտրոնական հարթավայրեր — Մակենզի
3) Մեծ ավազան սարահարթ — Յուկոն
4) Մեծ Հարթավայրեր — Միսսուրի

19 **Ո՞ր լեռներն են քարտեզում նշված Դ տառով.**

1) Տյան Շանի
2) Զագրոսի
3) Էլբուրսի
4) Հինդուկուշի



20 **Ո՞ր մայրաքաղաքն է քարտեզում նշված Ը տառով.**

1) Թեհրան
2) Բաղդադ
3) Իսլամաբադ
4) Քաբուլ

21 **Ուրբանիզացման մակարդակը որոշող ցուցանիշ է.**

1) քաղաքային բնակչության ծնվածների և մահացածների թվի տարբերությունը (մարդ)
2) Ամբողջ քաղաքային բնակչության թվի հարաբերակցությունը խոշոր քաղաքների բնակչության թվին
3) քաղաքային բնակչության բաժինը երկրի ընդհանուր բնակչության մեջ (%)
4) քաղաքային բնակչության թվի հարաբերակցությունը տարածքի մակերեսին (բն./կմ^2)

22 **Քաղաքային և գյուղական բնակավայրերի խոշոր կուտակումը մեծ քաղաքի կամ քաղաքների շուրջը, որոնք միմյանց հետ կապված են աշխատանքային, մշակութային, կենցաղային, արտադրական և այլ կապերով, կոչվում է.**

1) ուրբանիզացիա
2) ասիմիլյացիա
3) միգրացիա
4) ագլոմերացիա

23 **Բնութագրումով որոշել երկիրը.**

Այս երկիրը նախագահական հանրապետություն է: Այն ցամաքային կապող օղակ է Պիրենեյան թերակղզու և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի երկրների միջև: Հարուստ է ուրանի պաշարներով, որի շնորհիվ էլեկտրա–էներգիայի զգալի մասը արտադրվում է ատոմներում: Ո՞րն է այդ երկիրը.

1) Գերմանիան
2) Իսպանիան
3) ՌԴ–ն
4) Ֆրանսիան

24 **Երկրի բնակչության թիվը 4 մլն է, բնական աճի գործակիցը՝ 20 ‰: Բնակչության բացարձակ բնական աճը կկազմի.**

1) 80 000 մարդ
2) 100 000 մարդ
3) 20 000 մարդ
4) 40 000 մարդ

25 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Զարգացած երկրներում՝ բնակչության սեռային կազմում, կանանց թիվը գերազանցում է տղամարդկանց թվին:
2) Եվրոպական երկրներում ձևավորվել է բնակչության վերարտադրության առաջին տիպը:
3) Երբ ծնելիությունը հավասար է մահացությանը, վերարտադրությունը կոչվում է պարզ:
4) Զարգացող երկրներին բնորոշ է նեղ հիմքով, համեմատաբար լայն գագաթով սեռատարիքային բուրգ:

26 **Ընտրել «պետություն — մայրաքաղաք» համապատասխանության ճիշտ շարքը.**

1) Աֆղանստան
2) Թուրքիա
3) Եմեն
4) Վրաստան

ա. Անկարա
բ. Սանա
գ. Թբիլիսի
դ. Քաբուլ

1) 1–ա, 2–բ, 3–դ, 4–գ
2) 1–դ, 2–ա, 3–բ, 4–գ
3) 1–դ, 2–բ, 3–գ, 4–ա
4) 1–գ, 2–դ, 3–ա, 4–բ

27 **«Արտադրություն — արդյունաբերության ճյուղ» զույգերից ո՞րն է ճիշտ.**

1) պղնձի արտադրություն — քիմիական արդյունաբերություն
2) սարքաշինություն — մեքենաշինություն
3) պլաստմասսայի արտադրություն — մետաղաձուլություն
4) կաուչուկի արտադրություն — էներգետիկա

28 **Հարավարևելյան Ասիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Տարածաշրջանում բնակչության թվով ամենախոշոր երկիրը Բրունեյն է:
2) Ֆիլիպիններում բնակչության գերակշիռ մասը դավանում է մահմեդականություն:
3) Սինգապուրը տարածաշրջանում ուրբանիզացման ամենաբարձր մակարդակ ունեցող երկիրն է:
4) Ճավան տարածաշրջանի ամենանոսր բնակեցված կղզին է:

29 **Բնակչության վերարտադրության առաջին տիպի երկրներ են.**

1) Նիգերիան և Կոնգոն
2) Իտալիան և Ճապոնիան
3) Բանգլադեշը և Հնդկաստանը
4) Կամերունը և Պակիստանը

30 **Սեռատարիքային բուրգը բնորոշ է.**

1) Իրանին
2) Ալժիրին
3) Գերմանիային
4) Պակիստանին



31 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Պողպատի ձուլման ձեռնարկությունները կառուցվում են գիտական կենտրոնների մոտ:
2) Ջրաէլեկտրակայանները հիմնականում կառուցվում են հարթավայրային գետերի վրա
3) Ատոմներն ապահովում են աշխարհում արտադրվող էլեկտրաէներգիայի կեսից ավելին:
4) Ծանր գունավոր մետաղների ձուլումը կողմնորոշվում է դեպի հումքի բազաները:

32 **Ընտրել «առաջատար երկիր — մշակաբույս» համապատասխանության ճիշտ շարքը.**

1) Ռուսաստան	ա. եգիպտացորեն
2) Բրազիլիա	բ. արևածաղիկ
3) ԱՄՆ	գ. թեյ
4) Հնդկաստան	դ. սուրճ

1) 1–դ, 2–գ, 3–բ, 4–ա
2) 1–բ, 2–ա, 3–դ, 4–գ
3) 1–բ, 2–դ, 3–ա, 4–գ
4) 1–ա, 2–գ, 3–դ, 4–բ

33 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Արևմտյան Եփրատի միջլեռնային գոգավորություններից նշանավոր են Ալաշկերտի, Մշո, Խարբերդի դաշտերը:
2) Արաքս գետի հովտում հայտնի են Կարնո և Երզնկայի դաշտերը:
3) Հայկական հրաբխային բարձրավանդակի հարավային մասի արևմուտքում է Բյուրակն լեռնազանգվածը:
4) Արդահանի և Ախալքալաքի սարավանդները Հայկական հրաբխային բարձրավանդակի կենտրոնական մասում են:

34 **ՀՀ արդյունաբերության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Քիմիական արդյունաբերության խոշոր կենտրոններ են Հրազդան և Գյումրի քաղաքները:
2) Ալյումինի արդյունաբերությունը բացառապես օգտագործում է տեղական հումք՝ Թեժ լեռան և Շվանիձորի (Մեղրու լեռնաշղթա):
3) Մեքենաշինության զարգացումը պայմանավորված է սև մետաղների առկայությամբ:
4) Վառելիքային հաշվեկշռում ամենամեծ բաժինն ունի բնական գազը:

35 **Կոտայքի մարզը ո՞ր մարզին սահմանակից չէ.**

1) Տավուշի
2) Արագածոտնի
3) Լոռու
4) Արմավիրի

36 **Ո՞ր ջրանցքն է քարտեզում նշված Դ տառով.**

1) Նալբանդի
2) Կոտայքի
3) Լոռու
4) Շիրակի

37 **Ո՞ր քաղաքն է քարտեզում նշված Ը տառով.**

1) Հրազդան
2) Ապարան
3) Թալին
4) Աշտարակ



38 **Ո՞ր շարքի բոլոր երկրներն են հարուստ ջրաէներգետիկ ռեսուրսներով.**

1) ԱՄՆ, Ղազախստան, Եգիպտոս
2) Ճապոնիա, Ալժիր, Ավստրալիա
3) Բրազիլիա, Ռուսաստան, Կանադա
4) Ռուսաստան, Չինաստան, Մոնղոլիա

39 **Տրվածներից ո՞րը մթնոլորտի մարդածին աղտոտման աղբյուր չէ.**

1) կաթսայատները
2) անտառային հրդեհները
3) ջերմաէլեկտրակայանները
4) ջերմաէլեկտրակենտրոնները

40 **Պետական օրենքով կամ ազգային ավանդությամբ պահպանվող տարածքը, որտեղ ամբողջապես բացառված է մարդու տնտեսական գործունեությունը, կոչվում է.**

1) արգելոց
2) բնության հուշարձան
3) արգելավայր
4) ազգային պարկ

41 **Գրել Հայկական հրաբխային բարձրավանդակի հյուսիսային մասի լեռնագրական միավորների համարները.**

1) Արդահանի սարավանդ
2) Մեծ Մասիս լեռ
3) Սիփան լեռ
4) Ջավախքի լեռնազանգված
5) Ախալքալաքի սարավանդ
6) Սյունիքի բարձրավանդակ
7) Եղվարդի սարավանդ
8) Կոտայքի սարավանդ

42 **Գրել այն լեռնային համակարգերի համարները, որոնք Եվրոպայում են.**

1) Ալպեր
2) Կարակորում
3) Ալթայի լեռներ
4) Փոքր Կովկաս
5) Էլբուրսի լեռներ
6) Սկանդինավյան լեռներ
7) Կարպատներ
8) Չերսկու լեռներ

43 **Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են պողպատի արտադրությամբ.**

1) Արգենտինա
2) Կանադա
3) Մեքսիկա
4) Եգիպտոս
5) Ավստրալիա
6) Ղազախստան
7) Չինաստան
8) Ճապոնիա

44 **Տրված տրանսպորտի տեսակները դասավորել համաշխարհային ուղևորա-փոխադրումների կառուցվածքում ունեցած կշռի նվազման կարգով.**

1) ավիացիոն
2) ավտոմոբիլային
3) երկաթուղային
4) ծովային

45 **ՀՀ բնակչության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) Բնակչության թվով երրորդ քաղաքը Գյումրին է:
2) Հարևան պետությունների համեմատ բնակչության բարձր խտություն ունեցող երկիր է:
3) Եզդիների մեծ մասը բնակվում են Արագածոտնի և Արմավիրի մարզերի գյուղական բնակավայրերում:
4) Մինչև 1000 մ բարձրությունները ՀՀ ամենանոսրաբնակ տարածքն է:
5) 1988-1990 թթ. ավելի քան 180 հազ. ադրբեջանցիներ Հայաստանից հեռացան, իսկ ազատված բնակավայրերում հաստատվեց Ադրբեջանից արտաքսված հայությունը:
6) ՀՀ բնակչության կեսից ավելին բնակվում է 1500-2500 մ բացարձակ բարձրության գոտում:

Բ մակարդակ

46 **Երևան (արլ. ե. 44º30′) և Պրահա (արլ. ե. 14º) քաղաքների գոտիական ժամանակների տարբերությունը կլինի.**

1) 3 ժամ
2) 4 ժամ
3) 1 ժամ
4) 2 ժամ

47 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Մասշտաբը թվային արտահայտություն է, որը ցույց է տալիս, թե հատակագծում կամ քարտեզում պատկերված տարածքը քանի անգամ է փոքրացված իրական չափերից:
2) Երկրի առանցքի թեքությունն իր ուղեծրի հարթության նկատմամբ կազմում է 23° 30′ անկյուն:
3) Ամբողջ երկրագնդի, նրա մայրցամաքների կամ երկրների ընդհանրացված պատկերը թղթի վրա կոչվում է հատակագիծ:
4) Երկրի մակերևույթի որևէ կետի բարձրությունը՝ հաշված ծովի մակարդակից, կոչվում է հարաբերական բարձրություն:

48 **Ո՞ր շարքի գետերն են հոսում հարավից հյուսիս ուղղությամբ.**

1) Դանուբ, Կուր, Ամուր
2) Օբ, Ենիսեյ, Լենա
3) Դնեպր, Վոլգա, Մեկոնգ
4) Ինդոս, Եփրատ, Գանգես

49 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Մթնոլորտային ցածր ճնշման գոտիներում լինում են առատ տեղումներ:
2) Մթնոլորտային բարձր ճնշման գոտիներում օդը կատարում է վարընթաց շարժում:
3) Հասարակածից բևեռներ շարժվելիս Արեգակից ստացվող ջերմության քանակը նվազում է:
4) Երկրագնդի վրա առանձնացնում են մթնոլորտային ցածր ճնշման չորս և բարձր ճնշման երեք գոտիներ:

50 **Ո՞րն է բնության բաղադրիչների ճիշտ զուգորդությունը.**

1) սավաննա — մոխրագորշ հող — փետրախոտ, սիզախոտ
2) տունդրա — կմախքային հող — հաճարենի, կաղնի
3) տայգա — պոդզոլային հող — եղևնի, սոճի
4) տափաստան — սևահող — օշինդր, ուղտափուշ

51 **«Սահմանակից երկրներ — գետեր» զուգորդումներից ընտրել ճիշտը.**

1) Ռուսաստան — Ուկրաինա — Դնեպր
2) ԱՄՆ — Կանադա — Կոլորադո
3) Ռուսաստան — Չինաստան — Ամուր
4) Իրան — Թուրքիա — Եփրատ

52 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Քրիստոնյաների մեծ մասը կաթոլիկներ են:
2) Հնդկաստանի բնակչության մեծ մասը դավանում է բուդդայականություն:
3) Հինդուականություն և սինտոականությունը ազգային կրոններ են:
4) Իրանի բնակչության մեծ մասը դավանում է իսլամի շիա ուղղությունը:

53 **«Նավահանգիստ — պետություն» զույգերից ընտրել ճիշտը.**

1) Համբուրգ — Ֆրանսիա
2) Մարսել — Կանադա
3) Ռոտերդամ — Նիդերլանդներ
4) Վանկուվեր — Գերմանիա

54 **Հնդկաստանի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Հանքային հումքի բացակայության պատճառով արդյունաբերության կառուցվածքում բացակայում է քիմիական արդյունաբերությունը:
2) Թեթև արդյունաբերության առաջատար ճյուղերից է բամբակյա գործվածքների արտադրությունը:
3) Էլեկտրաէներգիայի գերակշիռ մասն արտադրվում է ատոմային էլեկտրակայաններում:
4) Սև մետաղաձուլությունը տեղաբաշխված է երկրի արևմուտքում:

55 **Բնութագրումով որոշել պետությունը.**

Եվրոպական այս երկիրը սահմանադրական միապետություն է: Մայրաքաղաքը խոշոր ծովային նավահանգիստ է և համաշխարհային նշանակության ֆինանսական կենտրոն: Արդյունաբերության ավանդական ճյուղերից են ածխարդյունաբերությունն ու սև մետաղաձուլությունը: Ո՞րն է այդ պետությունը.

1) Մեծ Բրիտանիան
2) Շվեդիան
3) Ֆրանսիան
4) Գերմանիան

56 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Սյունիքի բարձրավանդակի ամենաբարձր լեռնագագաթը Մեծ Իշխանասարն է:
2) Հարավային լեռնաշղթաների և միջլեռնային գոգավորությունների մարզում է Արփայի գոգավորությունը:
3) Սևանա լիճն արևմուտքից եզրավորվում է Արեգունու և Սևանի լեռնաշղթաներով:
4) Շիրակի լեռնաշղթան ձգվում է միջօրեականի ուղղությամբ՝ Բազումի լեռնաշղթայից մինչև Վիրահայոց լեռնաշղթա:

57 **Ո՞ր կլիմայատիպն է բացակայում Սյունիքի մարզում.**

1) չոր, խիստ ցամաքային
2) ցուրտ լեռնային
3) չոր մերձարևադարձային
4) բարեխառն լեռնային

58 **Լոռու մարզում արդյունաբերության ո՞ր ենթաճյուղը զարգացած չէ.**

1) քիմիական արդյունաբերությունը
2) պանրի արտադրությունը
3) գինու–կոնյակի արտադրությունը
4) պղնձաձուլությունը

59 **Ի՞նչն է ընդհանուր Սյունիքի և Վայոց ձորի մարզերի համար.**

1) Տուֆի, պեռլիտի պաշարներով ամենահարուստ մարզերն են:
2) Աչքի են ընկնում ուրբանիզացման բարձր մակարդակով:
3) Մարզերում գերակշռում են մակերևույթի հարթ ձևերը:
4) Սահմանակից են Նախիջևանի ԻՀ–ին:

60 **Խաղողագործական շրջան է.**

1) Սևանի ավազանը
2) Ապարանի սարահարթը
3) Արփայի հովիտը
4) Շիրակի դաշտը

61 **Տրված պետությունները դասավորել եգիպտացորենի համախառն բերքի աճման կարգով.**

1) Բրազիլիա
2) Մեքսիկա
3) Չինաստան
4) ԱՄՆ

62 **Գրել Արևելյան Եփրատի հովտում ընկած դաշտերի համարները.**

1) Խարբերդի
2) Բասենի
3) Կարնո
4) Մշո
5) Շիրակի
6) Երզնկայի
7) Արարատյան
8) Նախիջևանի

63 **Գրել այն երկրների համարները, որոնք միապետություններ են.**

1) Շվեդիա
2) Ֆինլանդիա
3) Իսպանիա
4) Գերմանիա
5) Իրան
6) Վրաստան
7) Քուվեյթ
8) Իրաք

64 **Գրել նեֆելինային սիենիտի հանքավայրերի համարները.**

1) Ագարակի
2) Աբովյանի (Կապուտան)
3) Փամբակի (Թեժ լեռան)
4) Մեղրու (Շվանիձոր)
5) Սվարանցի
6) Սոթքի
7) Հրազդանի
8) Շամլուղի

65 **Երկրի երկաթուղային տրանսպորտով տարեկան փոխադրվում է 2 մլն տ բեռ, իսկ բեռնաշրջանառությունը կազմում է 420 մլն տ·կմ: Որքա՞ն է բեռների փոխադրման միջին հեռավորությունը:**

(66-67) Երկրի բնակչության թիվը 2 մլն է, բնական աճի գործակիցը՝ 20 ‰: Տարվա ընթացքում ներգաղթը կազմել է 12 400 մարդ, արտագաղթը՝ 8 520 մարդ.

66 Որոշել բնակչության մեխանիկական աճը:

67 Որոշել բնակչության բացարձակ բնական աճը:

(68-69) Լեռան ստորոտին մթնոլորտային ճնշումը 680 մմ է, իսկ օդի ջերմաստիճանը՝ 22^0 C: Լեռան գագաթին օդի ջերմաստիճանը + 10^0 C է (հաշվարկը կատարել 6^0 C –ով).

68 Որոշել լեռան հարաբերական բարձրությունը:

69 Որոշել մթնոլորտային ճնշումը լեռան գագաթին:

70 **Հարավային Ամերիկայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) Կլիմայի ձևավորման վրա Խաղաղ օվկիանոսի ազդեցությունը սահմանա–փակում է Անդյան լեռնային համակարգը:
2) Ներքին հոսքի ավազանին է պատկանում տարածքի չնչին (շուրջ 2 %) մասը:
3) Հյուսիսային Ամերիկայից բաժանվում է Սուեզի ջրանցքով:
4) Հարավարևմտյան ափերի մոտով անցնում է Ֆոլկլենդյան սառը հոսանքը:
5) Հարավամերիկյան պլատֆորմի բարձրացած տեղամասերում ձևավորվել են Բրազիլական և Գվիանական սարահարթերը:
6) Անդերի՝ 4000 մ-ից վեր տարածվող բարձրալեռնային մարգագետիններին տեղացիները կոչում են լյանոս: